Կարգապահական գործ թիվ ԿԳ-19081

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2019 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 304-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ-180/Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԶՈՅԱ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ նաև Պալատ**) խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Նելլի Հարությունյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյան Սիմոն Բաբայանի, Հարություն Հարությունյանի և Կարեն Մեժլումյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մարիամ Պետրոսյանի,

քննության առնելով փաստաբան Զոյա Հակոբյանին (արտոնագիր՝ թիվ 191) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

16.05.2019թ-ին Պալատ է մուտքագրվել Նունե Մկրտչյանի (**այսուհետ նաև՝ Դիմող**) դիմումը, որով վերջինս հայտնել է, որ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարույթում է գտնվում թիվ ԵԴ/5651/02/19 քաղաքացիական գործն ըստ հայցի՝ Նունե Մկրտչյանի ընդդեմ Վարդան Բալդրյանի՝ ամուսնալուծության և ալիմենտի բռնագանձման պահանջի մասին և ըստ Վարդան Բալդրյանի հակընդդեմ հայցի՝ ընդդեմ Նունե Մկրտչյանի երեխայի հետ շփվելու, տեսակցության կարգ սահմանելու պահանջի մասին: Դիմողը հայտնել է, որ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարույթում է գտնվում նաև թիվ ԵԴ/1814/02/19 քաղաքացիական գործն ըստ հայցի՝ Նունե Մկրտչյանի ընդդեմ Վարդան և Գևորգ Բալդրյանների 30.03.2018թ. կնքված տրանսպորտային միջոցի նվիրատվության պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին: Նշված դատական գործերի շրջանակներում պատասխանողներ Վարդան և Գևորգ Բալդրյանների շահերը ներկայացնում է վերջիններիս մայրը, իր նախկին սկեսուրը՝ փաստաբան Զոյա Հակոբյանը (**այսուհետ նաև՝ Պատասխանող**): Դիմողը նշել է, որ Պատասխանողը յուրաքանչյուր նիստից առաջ բանավոր կամ գրավոր անտեղի իրականությանը չհամապատասխանող հայտարարություններ է անում իր հասցեին: Ըստ Դիմողի Պատասխանողը խոսում է ոչ թե որպես փաստաբան, այլ՝ մայր, նրա մոտ էմոցիաներն այնքան շատ են, որ իրեն չի կարողանում կառավարել, անձնականն ու աշխատանքայինը տարանջատել:

Դիմողը խնդրել է համապատասխան միջոցներ ձեռնարկել Պատասխանողի

նշված վարքագծի կապակցությամբ, կանխել և տալ համապատասխան գնահատական:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 17.06.2019թ. թիվ 201-Ա/ԿԳ-19081 որոշմամբ փաստաբան Զոյա Հակոբյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (**այսուհետ նաև՝ Օրենք**) 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 2.13.1 և 2.13.2 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

19.06.2019թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Կարեն Քամալյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել:

Պալատի խորհրդին նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցված է եղել նիստի օրվա, վայրի և ժամի մասին:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>

23.05.2019թ. ներկայացված բացատրությամբ Պատասխանողը հայտնել է, որ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում քննվող թիվ ԵԴ/5651/02/19 քաղաքացիական գործով հանդիսանում է իր որդի Վարդան Բալդրյանի ներկայացուցիչը: Պատասխանողը հայտնել է, որ թիվ ԵԴ5651/02/19 քաղաքացիական գործով նշանակված դատական նիստին Դիմողը և նրա ներկայացուցիչը չեն ներկայացել: Դատական նիստերին ինքն օգտվել է ներկայացուցչի իր իրավունքներից և բարեխղճորեն կատարել ստանձնած պարտականությունները՝ գործի փաստական հանգամանքների վերաբերյալ ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որի վերաբերյալ անհամաձայնության դեպքում Դիմողը կարող էր հերքել և հակափաստարկներ ներկայացնել դատարան: Պատասխանողը նաև նշել է, որ ինքը բացառապես օգտվել է իր իրավունքներից, կատարել փաստաբանի պարտականությունները և որևէ վիրավորական արտահայտություն չի հնչեցրել:

Կարգապահական գործի նախապատրաստման ընթացքում Պատասխանողի կողմից ներկայացվել է բացատրություն, որում Պատասխանողը նշել է, որ համաձայն չէ իր նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ Պալատի նախագահի որոշման հետ, քանի որ իր կողմից չի խախտվել Օրենքը կամ Կանոնագիրքը: Թիվ ԵԴ/1814/02/19 գործով ըստ էության դատական նիստ չի կայացել, քանի որ ի սկզբանե կողմերը ցանկացել են վեճը լուծել հաշտության համաձայնությամբ, և բանակցություններ են սկսվել կողմերի փաստաբանների միջև:

Թիվ ԵԴ/5651/02/19 գործով դատական նիստը նշանակված է եղել 15.04.2019թ.,

սակայն Դիմողն ու նրա ներկայացուցիչը չեն ներկայացել նիստին, թեպետ եղել են պատշաճ ծանուցված: Ըստ Պատասխանողի ինքը գործել է բացառապես իրեն վերապահված իրավունքների շրջանակներում, կատարել է իր վստահորդի հանձնարարությունն օրենքով նախատեսված իր լիազորությունների շրջանակներում՝ չխախտելով որևէ մեկի իրավունքները: Պատասխանողը նշել է նաև, որ նկատի ունենալով գործի առանձնահատկությունը, որ հանդիսանում է իր որդիների՝ Վարդան և Գևորգ Բալդրյանների ներկայացուցիչը դատարանում, ճանաչելով Դիմողին՝ գիտակցաբար այնպես է կազմակերպել ներկայացուցչությունը, որպեսզի այն զգացմունքային բնույթ չկրի և գործել է բացառապես օրենքի տառին համապատասխան:

Պատասխանողը խնդրել է իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ կարգապահական խախտման հիմքի բացակայության պատճառաբանությամբ:

08.10.2019թ. Պատասխանողը ներկայացրել է բացատրություն, որում նշել է, որ վերը նշված քաղաքացիական գործերով Դիմողը նիստերին ներկա չի եղել, թիվ ԵԴ5651/02/19 քաղաքացիական գործով 15.04.2019թ. նշանակված դատական նիստի ժամանակ իր որդին ներկայացրել է դիրքորոշում ամուսնալուծության հայցապահանջի մասին և միջնորդել ամուսնալուծության պահանջը առանձին քննել, ինչը բավարարվել է: Պատասխանողը նշել է, որ դիմումում նշված հանգամանքները չեն համապատասխանում իրականությանը, քանի որ ինքը թե՛ դատական նիստից առաջ, թե՛ հետո չէր կարող Դիմողին տեսնել և վիրավորել վերը նշված հանգամանքներից ելնելով: ԵԴ5651/02/19 քաղաքացիական գործով պատասխանողի կողմից դիրքորոշումը վերաբերել է Դիմողի կողմից ներկայացված ամուսնալուծության պահանջին և ընտանիքի քայքայման պատճառներին: 24.07.2019թ. հայցի քննարկման ժամանակ չի հրապարակվել դիրքորոշումը, դրան անդրադարձ չի կատարվել: Պատասխանողը նշել է նաև, որ իր ներկայացուցչությունն այնպես է կազմակերպում, որ չկրի զգացմունքային բնույթ:

Խորհրդի նիստին Պատասխանողը ներկայացել և պնդել բացատրությամբ ներակայացրած դիրքորոշումը, միևնույն ժամանակ ներկայացրել է միջնորդություն կարգապահական գործը դռնփակ քննելու մասին[1]:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

19.08.2019թ. Նախապատրաստողը կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ կողմերն առարկություններ չեն ներկայացրել:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 20.08.2019թ.:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 17.12.2019թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

---

[1] Խորհրդի որոշմամբ գործը քննվել է դռնփակ:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019թ. թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. թիվ ԵԴ/5651/02/19 և ԵԴ/1814/02/19 քաղաքացիական գործերով Պատասխանողը հանդիսացել է իր որդիների՝ Վարդան և Գևորգ Բալդրյանների ներկայացուցիչը՝ ընդդեմ Դիմողի:

Նշված փաստը հաստատվում է գործում առկա փաստաթղթերով, այդ թվում՝ Դիմողի դիմումով, Պատասխանողի բացատրություններով, Պատասխանողի և Վարդան Բալդրյանի միջև կնքված ծառայություն մատուցելու վերաբերյալ պայմանագրով:

2. Պատասխանողը Դիմողի վերաբերյալ նշել է հետևյալ արտահայտությունները՝ *…որպես ընտանիքի կին և երեխայի մայր կայացած չլինելու պատճառով…, …նա կոպիտ, ընտանիքի արժեքները չհարգող, իր սեփական կարծիքը չունեցող անձնավորություն է…, …իր վարքագծով և պահվածքով խաթարել է Միքայելի մանկությունը և ապագան…, …դաժանաբար ծեծի էր ենթարկում մանկահասակ երեխային …, …երեխային անտարբերության է մատնել…:*

Նշված փաստը հաստատվում է դիմումին կից ներկայացված Դիրքորոշում վերտառությամբ փաստաթղթով՝ ստորագրված Զոյա Հակոբյանի կողմից:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Զոյա Հակոբյանը փաստաբան է հանդիսանում 18.10.1982թ., և 2015-2019թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 17.06.2019թ. թիվ 201-Ա/ԿԳ-19081 որոշմամբ հարուցված կարգապահական գործի):

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Խորհուրդը գտնում է, որ Պալատի նախագահի կողմից 17.06.2019թ. թիվ 201-Ա/ԿԳ-19081 որոշմամբ փաստաբան Զոյա Հակոբյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Հարուցման պահին գործող Կանոնագրքի 2.13.1 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պետք է հնարավորինս ձեռնպահ մնա իր կամ իր մերձավոր ազգականի*

գործը վարել, եթե գործի զգացմունքային բնույթը կարող է խանգարել պատշաճ իրավական օգնություն ցույց տալուն: **Կանոնագրքի 2.13.2 ենթակետի համաձայն՝** *սույն կետի պահանջի խախտումը պատասխանատվություն է առաջացնում, եթե իր կամ իր մերձավոր ազգականի գործը վարող փաստաբանը թույլ է տալիս դատավարության մյուս մասնակիցների կամ փաստաբանների նկատմամբ բռնի կամ վիրավորական գործողություններ:*

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019թ. թիվ 1/-Լ որոշմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը հաստատվել է նոր խմբագրությամբ (**այսուհետ՝ Նոր խմբագրությամբ Կանոնագիրք)**, որի համաձայն՝ Կանոնագրքի 2.13.1 և 2.13.2 ենթակետերը հանվել են, այսինքն՝ դրանցով սահմանված արարքները դադարել են լինել կարգապահական իրավախախտում:

Նոր խմբագրությամբ Կանոնագրքի 10.4 կետի համաձայն՝ այն դեպքում, երբ *կարգապահական վարույթը հարուցվել է նախորդ խմբագրությամբ Կանոնագրքի կետի կամ ենթակետի հիմքով, իսկ նոր խմբագրությամբ Կանոնագիրքը նույն արարքը համարում է խախտում, ապա Պալատի խորհուրդը փաստաբանին պատասխանատվության ենթարկելու հարցը լուծում է նախորդ խմբագրությամբ Կանոնագրքի համապատասխան կետով կամ ենթակետով:*

Վերոնշյալ կանոնից հետևում է, որ Խորհուրդը փաստաբանին պատասխանատվության ենթարկելու հարցը կարող է լուծել նախորդ խմբագրությամբ Կանոնագրքի համապատասխան կետով կամ ենթակետով միայն այն դեպքում, երբ կարգապահական վարույթը հարուցվել է նախորդ խմբագրությամբ Կանոնագրքի կետի կամ ենթակետի հիմքով և նոր խմբագրությամբ Կանոնագիրքը նույն արարքը համարում է խախտում: Նշված կանոնից հետևում է նաև, որ այն բոլոր դեպքերում, երբ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթը հարուցվել է նախորդ խմբագրությամբ Կանոնագրքով նախատեսված որևէ արարքի հիմքով, իսկ նոր խմբագրությամբ Կանոնագրքով այդ արարքը խախտում չի համարվում, փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը պետք է լուծվի նոր խմբագրությամբ Կանոնագրքին համապատասխան:

Սույն գործով Պատասխանողի կողմից ենթադրաբար դրևորվել է վարքագիծ, որը համապատասխանում է նախորդ խմբագրությամբ Կանոնագրքի 2.13.1 և 2.13.2 ենթակետերին, որոնք Նոր խմբագրությամբ Կանոնագրքով հանվել են, այսինքն՝ Պատասխանողին վերագրվող և այդ ենթակետերով նախատեսված արարքները դադարել են լինել կարգապահական խախտում, ուստի կարգապահական վարույթը նախորդ խմբագրությամբ Կանոնագրքի 2.13.1 և 2.13.2 ենթակետերի մասով ենթակա է կարճման:

Ամանդրադառնալով Պատասխանողի կողմից Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի խախտման հանգամանքին՝ Խորհուրդն արձանագրում է, որ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի վերլուծությունից բխում է, որ նշված նորմի խախտումն առկա է, եթե փաստաբանի կողմից թույլ է տրվել Օրենքի, Կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջների խախտում: Սույն գործով Կանոնագրքի պահանջների խախտումը կարող էր հանգեցնել նշված նորմի խախատմանը: Նկատի ունենալով, որ կարգապահական վարույթը Կանոնագրքի 2.13.1 և 2.13.2 ենթակետերի մասով ենթակա է կարճման, այսինքն՝ բացակայում է Կանոնագրքի պահանջների խախտումը, ուստի կարգապահական վարույթը Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի մասով նույնպես ենթակա է կարճման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 39-րդ հոդվածի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, ՀՀ «Փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, Նոր խմբագրությամբ Կանոնագրքի 10.4 կետի պահանջներով՝ Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Պալատի նախագահի 17.06.2019թ. թիվ 201-Ա/ԿԳ-19081 որոշմամբ փաստաբան Զոյա Հակոբյանի (արտոնագիր՝ թիվ 191) նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Կանոնագիրքի 2.13.1 և 2.13.2 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկ ամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Նելլի Հարությունյան

17 դեկտեմբերի 2019թ.
թիվ ԿԳ/180-Ա
ք. Երևան